ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

8 օգոստոսի 2011թ. **N_____ -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի «Երկաթուղային գծի ապամոնտաժման համար թույլտվություն տալու և Երևան քաղաքի համայնքին անհատույց սեփականության իրավունքով գույք տրամադրելու մասին» N957-Ն որոշումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Որպես նվիրաբերություն ընդունել Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող գույքը, համաձայն հավելվածի՝ ճանապարհ կառուցելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2011 թվականի օգոստոսի 8-ի N-Ա որոշման

ՑԱՆԿ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՊԵՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆՎՈՂ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ, ԵՐԿԱԹՈՒՂՈՒ 8 ԿՄ + 6ՊԻԿԵՏ +25 Մ-13 ԿՄ +1 ՊԻԿԵՏ՝ ՆԵՐԱՌՑԱԼ ԸՆԿԱԾ ԳՆԱՀԱՏՎԱԾԸ

N/N ը/կ	Անվանումը	Գույքահամարը	Հաշվապահական տվյալները առ 2008 թվականի հունիքի 1-ի դրությամբ (դրամ)	
			սկզբնական արժեքը	մնացորդային արժեքը
1.	Քարե խողովակ 11 կմ+705	20020678	157 725,00	-
2.	Երկաթբետոնյա կամուրջ 12կմ+001	20020551	145 110,00	47 453,84
3.	Քարե կամուրջ 12կմ+311	20020552	173 880,00	-
4.	Բորդյուրե պատ 12 կմ +285 մինչև 12 կմ +539	20020571	47 925,00	-
5.	Որսացող պատ 12 կմ +536 մինչև 12 կմ +957	20020580	599 425,00	-
6.	Մետաղե խողովակ 9կմ+276	20020609	583 500,00	28 220,00
7.	Երկաթբետոնե խողովակ 11կմ+110	20020610	11 700,00	-
8.	Քարե խողովակ 10կմ+851	20020625	522 075,00	203 373,31
9.	Երկաթբետոնե ուղեանց 2*24.02 Արաբկիր–Քանաքեռ 13կմ+377	20020628	1 867 620,00	351 758,00
10.	Հենապատ կմ 11+790 մինչև կմ 11+840	20020638	1 562 265,00	-
11.	Երկաթբետոնե սրան անցում կմ 10+254 մինչև կմ 10+620	20020639	4 452 465,00	1078 410,92
12.	Մետաղյա խողովակ 1x 0.6կմ 11+208	20020651	17 550,00	-
13.	Որսացող պատ կմ 9+059 մինչև կմ 9+440	20020567	999 645,00	313 293,04
14.	Երկաթբետոնե կամուրջ կմ 11+658	20020608	151 920,00	34 678,00
15.	Քարե խողովակ կմ 9+893	20020647	3 175 815,00	-
16.	Քարե խողովակ կմ 11+374	20020650	9 405,00	1 926,92

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի «Երկաթուղային գծի ապամոնտաժման համար թույլտվություն տալու և Երևան քաղաքի համայնքին անհատույց սեփականության իրավունքով գույք տրամադրելու մասին» N957-Ն որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող՝ որոշման N2 հավելվածում ներառված գույքն անհատույց սեփականության իրավունքով տրամադրվել է Երևան քաղաքի համայնքին՝ ճանապարհ կառուցելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 597-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ նվիրառուն իրավունք ունի մինչև նվերն իրեն հանձնելը ցանկացած պահի հրաժարվել դրանից: Այդ դեպքում նվիրատվության պայմանագիրը համարվում է լուծված: Ուստի անհրաժեշտություն է առաջացել կայացնել որոշում՝ նվերն ընդունելու մասին:

Ելնելով վերոգրյալից Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գույք ընդունելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ